

**ԷՆԵՐԳԻԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ:  
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

**Պատրաստված է**

**Էկո-Հայաստան դաշինքի  
«Փրկենք մեր անտառները» քարոզարշավի համար**

**Դոկտոր Լուսիկ Յ. Դանիելյան, Տնօրեն  
Անի Դալլաքյան, Ավագ գիտաշխատող**

**Թուրփանջյան հասարակական հետազոտությունների կենտրոն  
Հայաստանի ամերիկյան համալսարան**

**Հունիս 2007**

## **Յիմնական արդյունքների ամփոփում**

- Յայաստանի տասը քաղաքացիներից ինը կարծում են, որ աղքատության նվազումը կնվազեցնի նաև վառելափայտի համար անտառի ապօրինի օգտագործումը:
- Յայաստանի բոլոր տնային տնտեսություններին գազը հասանելի դարձնելը համարվել է առաջնային լուծում, որը կարող է օգնել փրկելու անտառները Յայաստանում:

### *Անտառների օգտագործումը*

- Յայաստանի քաղաքացիների 14 տոկոսը գնում է անտառ՝ տան համար վառելափայտ հավաքելու նպատակով:
- Շատ ավելի գյուղական և մարզերի բնակիչներ, քան քաղաքային և Երևանի բնակիչներ են անտառում վառելափայտ հավաքում տան համար: Նմանապես, շատ ավելի անտառներին մոտ գտնվող գյուղերի բնակիչներ, քան անտառներից հեռու գտնվող գյուղերի բնակիչներ են գնում անտառ այդ նպատակով:

### *Վառելափայտի օգտագործումը*

- Յայաստանի տասը քաղաքացիներից երեքը ջեռուցման կամ սննդի պատրաստման համար որպես վառելիք տանը օգտագործում են փայտ:
- Ավելի շատ գյուղական և մարզերի բնակիչներ, քան քաղաքային և Երևանի բնակիչներ են վառելափայտ օգտագործում տանը ջեռուցման կամ սննդի պատրաստման համար: Տանը վառելափայտ օգտագործող քաղաքացիների մեծամասնությունը բնակվում է ընդարձակ անտառտարածքներ ունեցող մարզերում:
- Անտառներին մոտ գտնվող գյուղերի տասը բնակիչներից ութը և անտառներից հեռու գտնվող գյուղերի տասը բնակիչներից միայն չորսն են ջեռուցման կամ սննդի պատրաստման համար վառելափայտ օգտագործում: Նմանապես, գազ չունեցող գյուղերի տասը բնակիչներից ութը և գազ ունեցող գյուղերի տասը բնակիչներից հինգը վառելափայտ են օգտագործում այդ նպատակներով:
- Տանը վառելափայտ օգտագործող քաղաքացիների մոտ 60 տոկոսը հավաքում է փայտը ընկած ծառերից և ճյուղերից:
- Տանը վառելափայտ օգտագործող քաղաքացիների գրեթե 40 տոկոսը գնում է փայտը իրենց տարածքից դուրս՝ այլ տեղ հատված ծառերից:
- Գյուղական բնակավայրերում ապրող և տանը վառելափայտ օգտագործող տասը բնակիչներից չորսը փայտը ուրիշներից են գնում գյուղում:
- Կացարանների ջեռուցման, միջին հաշվով, 68 տոկոսը և սննդի պատրաստման 22 տոկոսն իրականացվում են փայտ վառելով: Յայաստանի քաղաքացիները տարեկան կտրվածքով, ընդհանուր առմամբ, օգտագործում են, միջին հաշվով, 6.7 մ<sup>3</sup> փայտ ջեռուցման և սննդի պատրաստման համար, ընդ որում գյուղական և մարզերի բնակիչներն ավելի շատ փայտ են օգտագործում, քան քաղաքային և Երևանի բնակիչները:

*Փայտից բացի վառելիքի այլ տեսակների օգտագործումը*

- Չայաստանի քաղաքացիների մոտ երկու երրորդը տանը ջեռուցման և/կամ սննդի պատրաստման համար օգտագործում է բնական գազ, տասը քաղաքացիներից չորսն օգտագործում են էլեկտրաէներգիա, տասից երկուսը՝ գոմաղբ, և հինգից մոտ մեկը՝ պրոպան գազ:
- Գազ ունեցող շենքերում բնակվող քաղաքային բնակիչներից ոչ բոլորը տանը գազ ունեն, այն էլ հիմնականում այն պատճառով, որ չունեն անհրաժեշտ գումար՝ տանը գազ անցկացնելու համար:
- Գազ չօգտագործող տասը քաղաքացիներից գրեթե վեցը համաձայնել են վերցնելու ցածր տոկոսադրույթով վարկեր՝ տանը գազ անցկացնելու համար:
- Գյուղական բնակավայրերում ապրող տասը քաղաքացիներից յոթը կարծում են, որ գյուղական բնակիչները կդադարեն վառելափայտ օգտագործելուց, եթե գազ ունենան իրենց կացարաններում:

## **Ներածություն**

Էկո-Յայաստան դաշինքը նախաձեռնել է մի քարոզարշավ, որի նպատակն է վերհանել Յայաստանի անտառահատումների բազմաշերտ խնդիրը և փորձել լուծել այն «Փրկենք մեր անտառները» արշավի միջոցով: Դաշինքը կազմված է Յայաստանում գործող ակտիվ և արդյունավետ բնապահպանական կազմակերպություններից՝ Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ, Յայաստանի ամերիկյան համալսարանի Շրջակա միջավայրի պահպանության հետազոտական կենտրոն, «Յայաստան ծառատունկ ծրագիր» հիմնադրամ և «Յայաստանի անտառներ» հասարակական կազմակերպություն: Քարոզարշավը, ընդհանուր առմամբ, կներառի ամբողջական մի ծրագիր, որի հիմքում են բնական ռեսուրսների միասնական ղեկավարումը, տնտեսական զարգացումը և արդյունավետ կառավարումը Յայաստանում: «Փրկենք մեր անտառները» քարոզարշավը նպատակ ունի ներկայացնելու և խթանելու Յայաստանում անտառահատումների խնդրի առնչությամբ մի շարք լուծումներ:

Պայմանագիր է կնքվել Յայաստանի ամերիկյան համալսարանի (ՅԱՅ) Թուրփանջյան հասարակական հետազոտությունների կենտրոնի (ԹՅՅԿ) հետ՝ հանրային իրազեկման քարոզարշավի մշակման համար տեղեկատվություն տրամադրելու նպատակով հարցում անցկացնելու համար: Յայաստանի ամբողջ տարածքում իրականացված այս հարցման նպատակն է պարզել հասարակության՝ անտառների և անտառահատումների ըմբռնումն ու գիտելիքի մակարդակը, բացահայտել Յայաստանի հասարակության կարծիքը, վարքագիծը և վերաբերմունքը Յայաստանում անտառների պահպանության առնչությամբ և հասկանալ վառելափայտի օգտագործման առանձնահատկությունները:

Այս զեկույցը ներկայացնում է հարցման արդյունքների մի մասը և հիմնականում անդրադառնում է Յայաստանի բնակչության կողմից էներգիայի օգտագործման առանձնահատկություններին:

## **Մեթոդաբանություն**

Յայաստանի 18-ից մինչև 75 տարեկան քաղաքացիների ներկայացուցչական ընտրանքը որոշելու համար ԹՅՅԿ-ն դիմել է ՀՀ վիճակագրական ազգային ծառայությանը՝ հետևյալ պարամետրերի վերաբերյալ գոյություն ունեցող տեղեկատվությունն ստանալու համար. 1) բնակչության թիվը՝ մարզային կտրվածքով, 2) տասը մարզերից յուրաքանչյուրի բնակչության թիվը՝ գյուղական և քաղաքային բնակիչների կտրվածքով և 3) Երևանի բնակչության թիվը՝ ըստ տասներկու համայնքների: Տնային տնտեսություններն ընտրվել են Երևան քաղաքից և տասը մարզերից համամասնորեն՝ արտացոլելով ՀՀ վերջին մարդահամարի տվյալները: Յուրաքանչյուր մարզից մեկ քաղաք և մեկ գյուղ են մասնակցել հարցմանը: ԹՅՅԿ-ն տասը քաղաքներից յուրաքանչյուրի համար ՀՀ Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոնից ձեռք է բերել մանրամասն քարտեզներ<sup>1</sup>: Երևանի դեպքում օգտագործվել է քաղաքի քարտեզը, որում պատկերված են շենքերը՝ ըստ համայնքների: ԹՅՅԿ-ն դիմել է տասը մարզային քաղաքներին և Երևանի տասներկու համայնքներին՝ որոշելու համար բազմաբնակարան շենքերի և սեփական առանձնատների համամասնությունը: Մարզային յուրաքանչյուր քաղաքի և Երևանի յուրաքանչյուր համայնքի համար օգտագործվել են քարտեզներ՝ պարբերական (սիստեմատիկ) պատահական ընտրանքի միջոցով շենքերն ընտրելու համար: Տասը քաղաքներում և Երևանում՝ արդեն տեղում, յուրաքանչյուր բազմաբնակարան շենքից հասարակ պատահական ընտրանքի միջոցով ընտրվել է մեկ տնային տնտեսություն:

<sup>1</sup> Դրանք ի սկզբանե պատրաստվել են ՀՀ 2001-ի մարդահամարի համար:

Այս հետազոտությունը նպատակ ուներ հարցման մեջ ընգրկելու թե՛ անտառներին մոտ գտնվող գյուղերի, թե՛ անտառներից հեռու գտնվող գյուղերի բնակիչներին: Անտառներին մոտ գտնվող գյուղերն<sup>2</sup> ընտրվել են ընդարձակ անտառտարածքներ ունեցող հինգ մարզերի դեպքում<sup>3</sup> (Տավուշի, Լոռվա, Սյունիքի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզեր): Այդ հինգ մարզերից յուրաքանչյուրի համար Յայաստանի ամերիկյան համալսարանի Շրջակա միջավայրի պահպանության հետազոտական կենտրոնի աջակցությամբ ստեղծվել են միայն անտառներին մոտ գտնվող գյուղերի ցուցակները<sup>4</sup>: Այդ հինգ մարզերից յուրաքանչյուրի դեպքում պատահականորեն ընտրվել է անտառին մոտ գտնվող մեկ գյուղ: Մնացած հինգ մարզերի դեպքում յուրաքանչյուր մարզից պատահականորեն ընտրվել է նույնպես մեկ գյուղ: ԹՅՅԿ-ն դիմել է տասը գյուղերի գյուղապետարաններին՝ տնային տնտեսությունների թիվը որոշելու համար, և տնային տնտեսությունները տեղում ընտրվել են պարբերական պատահական ընտրանքի միջոցով: Յուրաքանչյուր գյուղի գազի առկայությունը նույնպես պարզվել է նախօրոք: Արդյունքում, հարցմանը մասնակցել են գազ ունեցող վեց և գազ չունեցող չորս գյուղ:

Տնային տնտեսությունների ներսում հարցվածներն ընտրվել են պատահականորեն: Աղյուսակներ 1-ից մինչև 5-ը ցույց են տալիս անցկացված հարցազրույցների թիվը՝ մարզային կտրվածքով, քաղաքային և գյուղական ընտրանքներում ընդգրկված տնային տնտեսությունների թիվը, անտառներին մոտ կամ անտառներից հեռու գտնվող գյուղերի տնային տնտեսությունների թիվը, ինչպես նաև գյուղում գազի առկայության կտրվածքով: Մարզային քաղաքներում բնակվող հարցվածների 51 տոկոսը և Երևանի համայնքներում բնակվող հարցվածների մոտ 14 տոկոսն ապրում են սեփական առանձնատներում:

ԹՅՅԿ-ն մշակել է չափորոշիչներ ու հատուկ այդ նպատակով կազմված հարցաթերթիկ՝ Էկո-Յայաստան դաշինքի կողմից պահանջվող տեղեկատվության հիման վրա: Չափորոշիչներ մշակելիս ԹՅՅԿ-ն փորձել է գտնել անտառների և անտառահատումների վերաբերյալ այլ երկրներում անցկացված համապատասխան հարցումներ, որոնք ունենան վստահելի և ճշգրիտ չափորոշիչներ<sup>5</sup>: Հարցաթերթիկի բոլոր չափորոշիչները փորձարկվել են, և արվել են համապատասխան շտկումներ: Ընդհանուր հաշվով 2006-ի դեկտեմբերի 6-ից մինչև դեկտեմբերի 19-ը անց է կացվել 1,006 հարցազրույց<sup>6</sup>: Բոլոր տվյալները՝ քանակական և կողավորված որակական, մուտքագրվել են SPSS (վիճակագրական փաթեթ հասարակական ուսումնասիրությունների համար) վերլուծության համար:

Հարցազրույցների վերջում հարցման մասնակիցներին տրամադրվել են «Փրկենք մեր անտառները» քարոզարշավի ակնարկով և նախաձեռնության մեջ ընդգրկված կազմակերպությունների կոնտակտային տվյալներով տեղեկատվական թերթիկներ:

<sup>2</sup> Սահմանված որպես անտառից 5 կմ հեռավորության վրա գտնվող գյուղեր

<sup>3</sup> 1999-ի հունվարի 1-ի դրությամբ՝ համաձայն ՀՀ վիճակագրական ազգային ծառայության տվյալների

<sup>4</sup> Տվյալները հանվել են Յայաստանի անտառների քարտեզից՝ Աշխարհագրական տեղեկատվական համակարգ (ԱՏՀ) ծրագրի օգնությամբ:

<sup>5</sup> Երկու չափորոշիչ փոխ է առնվել Միացյալ թագավորությունում 1996-ին EU FAIR FP4-CT95-766 ծրագրի շրջանակներում իրականացված սպառողների հարցման և Կանադայում 2005-ին Բրիտանական Կոլումբիայի համալսարանի (Կանադա) Լանդշաֆտի Առաջընթաց Պլանավորման Համագործակցության (ԼԱՊՀ) կողմից իրականացված՝ անտառների կայուն կառավարման մասին հանրային կարծիքի հարցման հարցաթերթիկներից:

<sup>6</sup> Մերժման տոկոսը 8.5 է:

## **Յիմնական արդյունքները**

Յարցվածների միջին տարիքը 45 է (տե՛ս Աղյուսակ 20), հարցվածների 32 տոկոսը տղամարդիկ են, 68 տոկոսը՝ կանայք (տե՛ս Աղյուսակ 19):

Յարցվածների գրեթե 61 տոկոսը նկատել է, որ անտառների վիճակը Յայաստանում վերջին հինգ տարիների ընթացքում վատացել է (տե՛ս Աղյուսակ 6):

Յարցվածների 94 տոկոսն ասել է, որ եթե աղքատությունը նվազեր, ապա կնվազեր նաև վառելափայտի համար անտառի ապօրինի օգտագործումը (տե՛ս Աղյուսակ 7):

Յայաստանի անտառների փրկությանն ուղղված լուծումները գնահատելիս՝ հարցվածներն ամենաբարձր գնահատականը տվել են Յայաստանի բոլոր տնային տնտեսություններին գազը հասանելի դարձնելու լուծմանը (միջինը = 9.5): Յետևյալ լուծումն ստացել է փոքր-ինչ ավելի ցածր գնահատական. տնային տնտեսություններին ցածր տոկոսադրույքով վարկերի տրամադրում՝ գազ անցկացնելու համար (միջինը = 9.0) (տե՛ս Աղյուսակ 8): Մարզերի բնակիչները Երևանի բնակիչների համեմատությամբ ավելի բարձր գնահատականներ են տվել գազին առնչվող լուծումներին. գազը հասանելի դարձնել և գազ անցկացնելու համար ցածր տոկոսադրույքով վարկեր տրամադրել: Գազ չունեցող գյուղերի բնակիչներն ավելի բարձր են գնահատել Յայաստանի բոլոր տնային տնտեսությունները գազով ապահովելու լուծումը, քան գազ ունեցող գյուղերի բնակիչները:

## **Անտառների օգտագործումը**

Յարցվածների մոտ 14 տոկոսն անտառում վառելափայտ է հավաքում իրենց տան համար, մինչդեռ, ոչ զարմանալիորեն, հարցվածների միայն մեկ տոկոսն է հայտնել, որ գնում է անտառ՝ վաճառքի համար ծառ հատելու նպատակով (տե՛ս Աղյուսակ 9):

Գյուղական բնակիչների 30 տոկոսը և քաղաքային բնակիչների միայն հինգ տոկոսն են անտառում իրենց տան համար վառելափայտ հավաքում: Շատ ավելի մարզերի բնակիչներ (20 տոկոս), քան Երևանի բնակիչներ են (երեք տոկոս) գնում անտառ՝ իրենց տան համար վառելափայտ հավաքելու նպատակով: Նմանապես, շատ ավելի անտառներին մոտ գտնվող գյուղերի բնակիչներ (58 տոկոս), քան անտառներից հեռու գտնվող գյուղերի բնակիչներ են (յոթ տոկոս) հայտնել, որ գնում են անտառ այդ նպատակով: Բացի այդ, գոյություն ունի տարբերություն գյուղում գազի առկայության հիման վրա. գազ չունեցող գյուղերի բնակիչների մոտ 37 տոկոսը և գազ ունեցող գյուղերի բնակիչների 27 տոկոսն են նշել, որ իրենք վառելափայտ են հավաքում անտառում:

Բոլոր այն գյուղական բնակիչները (հարցման 5 մասնակից), որոնք հայտնել են, որ գնում են անտառ վաճառքի համար ծառ հատելու նպատակով, բնակվում են անտառներին մոտ գտնվող գյուղերում:

## **Վառելափայտի և այլ տեսակի վառելիքի օգտագործումը**

Յարցվածների գրեթե 62 տոկոսը տանն օգտագործում է բնական գազ ջեռուցման և/կամ սննդի պատրաստման համար: Մյուս միջոցները ներառում են էլեկտրաէներգիան (39 տոկոս), փայտը (23 տոկոս), գոմաղբը (22 տոկոս) և պրոպան գազը (17 տոկոս) (տե՛ս Աղյուսակ 10):

### Վառելափայտի օգտագործումը

Տանը ջեռուցման կամ սննդի պատրաստման համար վառելափայտի օգտագործման մասին ավելի կոնկրետ հարցի պատասխանելիս՝ հարցվածների մոտ 30 տոկոսը (հարցման 299 մասնակից) հայտնել է, որ օգտագործում է վառելափայտ այդ նպատակներով (տե՛ս Աղյուսակ 11):

Շատ ավելի գյուղական բնակիչներ (58 տոկոս), քան քաղաքային բնակիչներ (14 տոկոս) և շատ ավելի մարզերի բնակիչներ (43 տոկոս), քան Երևանի բնակիչներ են (վեց տոկոս) տանը վառելափայտ օգտագործում ջեռուցման կամ սննդի պատրաստման համար: Պատասխանները համեմատելով մարզային կտրվածքով մենք կտեսնենք, որ շատ ավելի ընդարձակ անտառտարածքներ ունեցող մարզերի բնակիչներ, քան փոքր անտառտարածքներ ունեցող մարզերի բնակիչներ են հայտնել, որ վառելափայտ են օգտագործում: Այսպես, օրինակ, Տավուշի մարզի հացվածների ճնշող մեծամասնությունը (93 տոկոս) օգտագործում է վառելափայտ, ինչպես և Սյունիքի (77 տոկոս) ու Լոռվա (51 տոկոս) մարզերի հարցվածների մեծամասնությունը: Ինչպես և ակնկալվում էր, շատ ավելի անտառներին մոտ գտնվող գյուղերի բնակիչներ (82 տոկոս), քան անտառներից հեռու գտնվող գյուղերի բնակիչներ (38 տոկոս), և շատ ավելի գազ չունեցող գյուղերի բնակիչներ (81 տոկոս), քան գազ ունեցող գյուղերի բնակիչներ են (48 տոկոս) վառելափայտ օգտագործում ջեռուցման կամ սննդի պատրաստման համար:

Տանը վառելափայտ օգտագործող հարցվածներին տրվել է հարց (որի ժամանակ թույլատրելի էին մեկից ավելի պատասխաններ) այն մասին, թե ինչպես են իրենք ձեռք բերում փայտը: Տանը վառելափայտ օգտագործող 299 հարցվածների 58 տոկոսը հայտնել է, որ հավաքում է այն ընկած ծառերից և ճյուղերից, մոտ 41 տոկոսը գնում է փայտը իրենց տարածքից դուրս՝ այլ տեղ հատված ծառերից, և մոտ վեց տոկոսն օգտագործում է իր կամ իր ընտանիքի անդամի կողմից հատված ծառերից ստացված փայտը: Դեռ ավելին, տանը վառելափայտ օգտագործող 207 գյուղական բնակիչների գրեթե 36 տոկոսն այն ուրիշներից է գնում գյուղում (տե՛ս Աղյուսակ 12ա):

Աղյուսակ 12բ-ն ներկայացնում է վառելափայտի ձեռք բերման եղանակների միջին տոկոսները: Հարցվածները փայտի, միջին հաշվով, մոտ 82 տոկոսը գնել են այլ տարածքներում հատված ծառերից, 71 տոկոսը հավաքել են ընկած ծառերից և ճյուղերից, 61 տոկոսը ուրիշներից են գնել գյուղում և 53 տոկոսը վերցրել են իրենց կամ իրենց ընտանիքի անդամների կողմից հատված ծառերից:

Հարցվածների կացարանների ջեռուցման, միջին հաշվով, 68 տոկոսը և սննդի պատրաստման մոտ 22 տոկոսն իրականացվում են փայտ վառելով: Հարցմանը մասնակցած տնային տնտեսությունները տարեկան կտրվածքով օգտագործում են, միջին հաշվով, 5.4 մ<sup>3</sup> փայտ ջեռուցման և 1.3 մ<sup>3</sup> փայտ սննդի պատրաստման համար: Այդ տնային տնտեսությունները տարեկան օգտագործում են, ընդհանուր հաշվով, 6.7 մ<sup>3</sup> փայտ:

Գյուղական բնակիչներն ավելի շատ փայտ են օգտագործում ջեռուցման և սննդի պատրաստման համար տարեկան, քան քաղաքային բնակիչները: Գյուղական բնակիչները տարեկան կտրվածքով օգտագործում են, միջին հաշվով, 6.0 մ<sup>3</sup> փայտ ջեռուցման համար, մինչդեռ քաղաքային բնակիչներն օգտագործում են 4.1 մ<sup>3</sup>: Դեռ ավելին, գյուղական բնակիչները տարեկան կտրվածքով օգտագործում են 1.5 մ<sup>3</sup> փայտ սննդի պատրաստման համար, մինչդեռ քաղաքային բնակիչները՝ 0.8 մ<sup>3</sup>:

Մարզերի բնակիչներն ավելի շատ փայտ են օգտագործում ջեռուցման և սննդի պատրաստման համար տարեկան, քան Երևանի բնակիչները: Եթե մարզերի բնակիչները տարեկան կտրվածքով օգտագործում են, միջին հաշվով, 5.6 մ<sup>3</sup> փայտ ջեռուցման համար, ապա Երևանի բնակիչները՝ 2.5 մ<sup>3</sup>: Նմանապես, եթե մարզերի բնակիչները տարեկան կտրվածքով օգտագործում են 1.3 մ<sup>3</sup> փայտ սննդի պատրաստման համար, ապա Երևանի բնակիչները՝ միայն 0.7 մ<sup>3</sup>:

Ինչպես և ակնկալվում էր, անտառներին մոտ գտնվող գյուղերի բնակիչներն ավելի շատ փայտ են օգտագործում ջեռուցման և սննդի պատրաստման համար տարեկան, քան անտառներից հեռու գտնվող գյուղերի բնակիչները: Միջին հաշվով, 7.0 և 4.2 մ<sup>3</sup> փայտ է օգտագործվում է ջեռուցման համար տարեկան անտառներին մոտ և անտառներից հեռու գտնվող գյուղերի բնակիչների կողմից, համապատասխանաբար: Նմանապես, 1.7 և 1.1 մ<sup>3</sup> փայտ է օգտագործվում է սննդի պատրաստման համար տարեկան անտառներին մոտ և անտառներից հեռու գտնվող գյուղերի բնակիչների կողմից, համապատասխանաբար: Դեռ ավելին, անտառներին մոտ գտնվող գյուղերում կացարանների ջեռուցման, միջին հաշվով, մոտ 78 տոկոսն է իրականացվում փայտ վառելով, մինչդեռ անտառներից հեռու գտնվող գյուղերի դեպքում՝ 42 տոկոսը:

Գազ չունեցող գյուղերում կացարանների ջեռուցման մոտ 77 տոկոսը և սննդի պատրաստման 37 տոկոսն իրականացվում են փայտ վառելով, մինչդեռ գազ ունեցող գյուղերում՝ մոտ 57 տոկոսը՝ ջեռուցման դեպքում և գրեթե 13 տոկոսը՝ սննդի պատրաստման դեպքում: Գազ չունեցող գյուղերի բնակիչներն ավելի շատ փայտ են օգտագործում ջեռուցման և սննդի պատրաստման համար տարեկան, քան գազ ունեցող գյուղերի բնակիչները: Այդպես, օրինակ, գազ չունեցող գյուղերի բնակիչները տարեկան օգտագործում են, միջին հաշվով, 2.0 մ<sup>3</sup> փայտ սննդի պատրաստման համար, մինչդեռ գազ ունեցող գյուղերի բնակիչները՝ միայն 1.0 մ<sup>3</sup>: Նմանապես, գազ չունեցող գյուղերի բնակիչները տարեկան օգտագործում են 6.4 մ<sup>3</sup> փայտ ջեռուցման համար, մինչդեռ գազ ունեցող գյուղերի բնակիչներն օգտագործում են 5.7 մ<sup>3</sup>:

Հարցվածների 17 տոկոսը (հարցման 173 մասնակից) հայտնել է, որ նախորդ ամիս<sup>7</sup> գնել է վառելափայտ, մինչդեռ 11 տոկոսը նշել է, որ անվճար է ձեռք բերել այն: Նախորդ ամսվա ընթացքում այդ 173 տնային տնտեսությունների կողմից վառելափայտի վրա ծախսած գումարը տատանվում էր 800-ից մինչև 30,000 ՀՀ դրամ՝ միջին հաշվով լինելով 8,641 դրամ մեկ տնային տնտեսության հաշվարկով (տե՛ս Աղյուսակ 16):

Հետաքրքիր է, որ գազ ունեցող գյուղերում տնային տնտեսություններն ավելի մեծ գումար են ծախսել վառելափայտի վրա նախորդ ամիս, քան գազ չունեցող գյուղերի տնային տնտեսությունները (11,455 դրամ ի տարբերություն 5,855 դրամի): Այդ արդյունքը կարելի է բացատրել այն փաստով, որ գազ ունեցող գյուղերի տնային տնտեսությունների մոտ մեկ չորրորդը (հարցման 60 մասնակից) չի օգտագործում գազ, չնայած որ այն հասանելի է գյուղում:

#### *Փայտից բացի վառելիքի այլ տեսակների օգտագործումը*

Մի քանի հարցի օգնությամբ փորձ է արվել բացահայտելու, թե վառելիքի էլ ինչ տեսակներ են օգտագործվում, և ինչու են որոշ տնային տնտեսություններ գազի առկայության դեպքում օգտագործում վառելափայտ՝ գազի փոխարեն:

<sup>7</sup> Նոյեմբեր 2006



Գազ օգտագործող 621 հարցվածներին խնդրել են նշել, թե որքան է կազմել տնային տնտեսության գազի ծախսը նախորդ ամիս: Գազի վրա ծախսած գումարը տատանվում էր 450-ից մինչև 60,000 ՀՀ դրամ՝ միջին հաշվով լինելով 7,786 դրամ մեկ տնային տնտեսության հաշվարկով (տե՛ս Աղյուսակ 17):

Նախորդ ամսվա ընթացքում գազի վրա ծախսած գումարն ավելի բարձր էր մարզերի տնային տնտեսությունների դեպքում՝ ի տարբերություն Երևանի տնային տնտեսությունների: Այդպիսով, եթե մարզերի տնային տնտեսությունները ծախսել են, միջին հաշվով, 9,108 դրամ, ապա Երևանի տնային տնտեսությունները՝ 5,613 դրամ: Նմանապես, անտառներից հեռու գտնվող գյուղերի տնային տնտեսություններն ավելի շատ են վճարել գազի դիմաց, քան անտառներին մոտ գտնվող տնային տնտեսությունները՝ 9,373 դրամ ի տարբերություն 7,154 դրամի:

Գազ չօգտագործող քաղաքային 55 բնակիչներին խնդրել են պատասխանել, թե ինչու իրենք գազ չեն օգտագործում: Այդ 55 հարցվածների 69 տոկոսն ասել է, որ տանը գազ չունի, քանի որ չունի ֆինանսական միջոցներ, որոնք անհրաժեշտ են տանը գազ անցկացնելու համար (տե՛ս Աղյուսակ 13):

Քաղաքային այդ 55 բնակիչներին, որոնք տանը գազ չունեն, չնայած որ բնակվում են գազ ունեցող բազմաբնակարան շենքերում, նաև խնդրել են պատասխանել, թե արդյոք իրենք կվերցնեին ցածր տոկոսադրույքով վարկեր՝ տանը գազ անցկացնելու համար: Այդ հարցվածների մոտ 62 տոկոսը կվերցներ նմանատիպ վարկեր (տե՛ս Աղյուսակ 14):

Տանը գազ անցկացնելու նպատակով վարկ վերցնելու մասին այդ նույն հարցը տրվել է նաև գյուղական այն 60 բնակիչներին, որոնք գազ չեն օգտագործում, չնայած որ այն հասանելի է գյուղում: Գյուղական այդ 60 բնակիչների 58 տոկոսը հայտնել է, որ կվերցներ նմանատիպ վարկեր, մինչդեռ 23 տոկոսը չի կարողացել պատասխանել այդ հարցին (տե՛ս Աղյուսակ 14):

Հարցվածներին խնդրել են նաև նշել, թե որքան է կազմել տնային տնտեսության էլեկտրաէներգիայի ծախսը նախորդ ամիս: Էլեկտրաէներգիայի վրա ծախսած գումարը տատանվում էր 400-ից մինչև 65,000 ՀՀ դրամ՝ միջին հաշվով լինելով 4,940 դրամ մեկ տնային տնտեսության հաշվարկով (տե՛ս Աղյուսակ 18):

Գյուղական բնակիչների գրեթե 66 տոկոսը նշել է, որ գյուղական բնակիչները կդադարեն վառելափայտ օգտագործելուց, եթե գազ ունենան իրենց կացարաններում, մինչդեռ 25 տոկոսը բացատրել է, որ ավելի էժան գազը կարող է այդպիսի լուծում հանդիսանալ, իսկ 16 տոկոսն ասել է, որ կենսամակարդակի բարելավումը կարող է օգնել դադարեցնելու վառելափայտի օգտագործումը (տե՛ս Աղյուսակ 15):

Ավելի շատ գազ չունեցող գյուղերի բնակիչներ (96 տոկոս), քան գազ ունեցող գյուղերի բնակիչներ են (52 տոկոս) նշել գազով ապահովելը որպես լուծում, մինչդեռ ավելի շատ գազ ունեցող գյուղերի բնակիչներ (35 տոկոս), քան գազ չունեցող գյուղերի բնակիչներ են (չորս տոկոս) առաջարկել էժանացնել գազը: Ավելի շատ անտառներից հեռու գտնվող գյուղերի բնակիչներ (23 տոկոս), քան անտառներին մոտ գտնվող գյուղերի բնակիչներ են (ինը տոկոս) մատնանշել կենսամակարդակի բարելավումը որպես լուծում:

<b>Աղյուսակ 1. Հարցազրույցների քանակն ըստ մարզերի՝ ՀՀ մարդահամարի տվյալների հետ համեմատած</b>			
	Քանակը	Տոկոսը	ՀՀ 2001 մարդահամարի տվյալները
Երևան	351	34.9	34.3
Արագածոտն	43	4.3	4.3
Արարատ	85	8.4	8.5
Արմավիր	86	8.5	8.6
Գեղարքունիք	73	7.3	7.4
Լոռի	89	8.8	8.9
Կոտայք	85	8.4	8.5
Շիրակ	88	8.7	8.8
Սյունիք	47	4.7	4.8
Տավուշ	42	4.2	4.2
Վայոց Ձոր	17	1.7	1.7
<b>Ընդամենը</b>	<b>1006</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>

<b>Աղյուսակ 2. Հարցազրույցների քանակն ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի՝ ՀՀ մարդահամարի տվյալների հետ համեմատած</b>			
	Քանակը	Տոկոսը	ՀՀ 2001 մարդահամարի տվյալները
Քաղաքային	650	64.6	64.3
Գյուղական	356	35.4	35.7
<b>Ընդամենը</b>	<b>1006</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>

<b>Աղյուսակ 3. Հարցազրույցների քանակն անտառներին մոտ և անտառներից հեռու գտնվող գյուղերում</b>		
	Քանակը	Տոկոսը
անտառներին մոտ գյուղեր	163	45.8
անտառներից հեռու գյուղեր	193	54.2
<b>Ընդամենը</b>	<b>356</b>	<b>100.0</b>

Աղյուսակ 4. Հարցազրույցների քանակը գազ ունեցող և գազ չունեցող գյուղերում		
	Քանակը	Տոկոսը
գազ ունեցող գյուղեր	245	68.8
գազ չունեցող գյուղեր	111	31.2
<b>Ընդամենը</b>	<b>356</b>	<b>100.0</b>

Աղյուսակ 5. Հարցազրույցների քանակն ըստ Երևանի և տասը մարզերի՝ ՀՀ մարդահամարի տվյալների հետ համեմատած			
	Քանակը	Տոկոսը	ՀՀ 2001 մարդահամարի տվյալները
Երևան	351	34.9	34.3
Մարզեր	655	65.1	65.7
<b>Ընդամենը</b>	<b>1006</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>

Աղյուսակ 6. Հայաստանում անտառների վիճակը չի վատացել վերջին հինգ տարիների ընթացքում				
	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը**	Գումարային տոկոսը
խիստ համաձայն եմ	80	8.0	9.6	9.6
համաձայն եմ	248	24.7	29.7	39.3
համաձայն չեմ	337	33.5	40.4	79.6
բոլորովին համաձայն չեմ	170	16.9	20.4	<b>100.0</b>
չգիտեմ/չեմ կարող ասել	171	17.0	<b>100.0</b>	
<b>Ընդամենը</b>	<b>1006</b>	<b>100.0</b>		
Միջինը=2.71, Մոդան=3, Սեդիանը=3.00 (1=խիստ համաձայն եմ և 4=բոլորովին համաձայն չեմ, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)				
**Իրական տոկոսն առանց «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխանների է				

**Աղյուսակ 7. Եթե աղքատությունը նվազեր, ապա կնվազեր նաև վառելափայտի համար անտառի ապօրինի օգտագործումը**

	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
Խիստ համաձայն եմ	529	52.6	53.8	53.8
համաձայն եմ	396	39.4	40.2	94.0
համաձայն չեմ	54	5.4	5.5	99.5
բոլորովին համաձայն չեմ	5	0.5	0.5	100.0
չգիտեմ/չեմ կարող ասել	22	2.2	100.0	
<b>Ընդամենը</b>	<b>1006</b>	<b>100.0</b>		

Միջինը=1.53, Մոդան=1, Սեդիանը=1.00 (1=խիստ համաձայն եմ և 4=բոլորովին համաձայն չեմ, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

**Աղյուսակ 8. Չայաստանում անտառների փրկությանն ուղղված լուծումներին տրված գնահատականների միջին արժեքները**  
(դասակարգված նվազման կարգով)

	Միջինը	Մոդան	Սեդիանը
Գազը հասանելի դարձնել Չայաստանի բոլոր տնային տնտեսություններին	9.49	10	10.00
Կառավարությունը փող հատկացնի՝ ծառեր տնկելու և անտառները վերականգնելու համար	9.34	10	10.00
Տնային տնտեսություններին տրամադրել ցածր տոկոսադրույթով վարկեր՝ գազ անցկացնելու համար	9.03	10	10.00
Կառավարությունը փող հատկացնի՝ անտառները հսկելու համար	8.84	10	10.00

(1=լուծում չէ և 10=գերազանց լուծում է, «չգիտեմ» և «չեմ հասկանում» պատասխաններն ընդգրկված չեն)

<b>Աղյուսակ 9. Ինչ նպատակներով են հարցվածները կամ իրենց ընտանիքի անդամները գնում անտառ Չայաստանում</b>				
		Այո	Ոչ	Ընդամենը
Չանգստի/ժամանցի նպատակով	Քանակը	727	279	1006
	տոկոսը	72.3	27.7	100.0
Ոչ փայտանյութ, այլ օրինակ, խոտաբույսեր հավաքելու նպատակով	Քանակը	497	509	1006
	տոկոսը	49.4	50.6	100.0
Տան համար վառելափայտ հավաքելու նպատակով	Քանակը	140	866	1006
	տոկոսը	13.9	86.1	100.0
Վաճառքի համար ծառ հատելու նպատակով	Քանակը	14	992	1006
	տոկոսը	1.4	98.6	100.0

<b>Աղյուսակ 10. Տանը ջեռուցման և/կամ սննդի պատրաստման ժամանակ օգտագործվող վառելիքը</b>		
<i>(թույլատրելի են մեկից ավելի պատասխաններ, դասակարգված նվազման կարգով)</i>		
	Քանակը	Տոկոսը 1006-ից
Բնական գազ	621	61.7
Էլեկտրաէներգիա	394	39.2
Փայտ	226	22.5
Աթար (գոմաղբ)	223	22.2
Պրոպան գազ	169	16.8
Այլ	10	1.0

<b>Աղյուսակ 11. Տանը ջեռուցման կամ սննդի պատրաստման համար վառելափայտի օգտագործումը</b>		
	Քանակը	Տոկոսը
այո	299	29.7
ոչ	707	70.3
<b>Ընդամենը</b>	<b>1006</b>	<b>100.0</b>

<b>Աղյուսակ 12ա. Եթե տանը վառելափայտ են օգտագործում, ապա ինչպես են այն ձեռք բերում</b>				
		Այո	Ոչ	Ընդամենը
Ինքս եմ հավաքում ընկած ծառերից և ճյուղերից	Քանակը	174	125	299
	տոկոսը	58.2	41.8	100.0
Գնում եմ այս տարածքից դուրս՝ այլ տեղ հատված ծառերից	Քանակը	121	178	299
	տոկոսը	40.5	59.5	100.0
Ուրիշներից եմ գնում գյուղում **	Քանակը	74	133	207
	տոկոսը	35.7	64.3	100.0
Իմ կամ իմ ընտանիքի անդամի կողմից հատված ծառերից	Քանակը	17	282	299
	տոկոսը	5.7	94.3	100.0
Այլ	Քանակը	30	269	299
	տոկոսը	10.0	90.0	100.0

**\*\* այս հարցը տրվել է միայն գյուղերում**

<b>Աղյուսակ 12բ. Վառելափայտի ձեռք բերման եղանակների միջին տոկոսները՝ ներկայացված Աղյուսակ 12ա-ում</b>	
<i>(դասակարգված նվազման կարգով)</i>	
	Միջինը
Գնում եմ այս տարածքից դուրս՝ այլ տեղ հատված ծառերից	81.69
Ինքս եմ հավաքում ընկած ծառերից և ճյուղերից	71.32
Ուրիշներից եմ գնում գյուղում **	61.22
Իմ կամ իմ ընտանիքի անդամի կողմից հատված ծառերից	53.24

**\*\* այս հարցը տրվել է միայն գյուղերում**

<b>Աղյուսակ 13. Շենքում գազի առկայության դեպքում ինչու չեն օգտագործում այն</b>		
<i>(բաց հարց է)</i>		
	Քանակը	Տոկոսը
Ֆինանսական միջոցների բացակայություն	38	69.1
դեռ չեն միացրել գազի խողովակին	15	27.3
այլ	2	3.6
<b>Ընդամենը</b>	<b>55</b>	<b>100.0</b>

<b>Աղյուսակ 14. Արդյոք զագ չօգտագործող հարցվածները կվերցնեին ցածր տոկոսադրույքով վարկ տանը զագ անցկացնելու համար՝ ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի</b>				
<i>(հարցը տրվել է քաղաքներում և զագ ունեցող գյուղերում)</i>				
		Քաղաքային	Գյուղական	Ընդամենը
այո	Քանակը	34	35	69
	տոկոսը	61.8	58.3	60.0
ոչ	Քանակը	12	11	23
	տոկոսը	21.8	18.3	20.0
չգիտենմ/չեն կարող ասել	Քանակը	9	14	23
	տոկոսը	16.4	23.3	20.0
<b>Ընդամենը</b>	<b>Քանակը</b>	<b>55</b>	<b>60</b>	<b>115</b>
	<b>տոկոսը</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>

<b>Աղյուսակ 15. Ինչ պետք է անել, որպեսզի գյուղական բնակիչները դադարեն վառելափայտ օգտագործելուց</b>		
<i>(թույլատրելի են մեկից ավելի պատասխաններ, դասակարգված նվազման կարգով, բաց հարց է, հարցը տրվել է միայն գյուղերում)</i>		
	Քանակը	Տոկոսը 356-ից
զազով ապահովել	234	65.7
էժանացնել զազը	89	25.0
բարելավել կենսամակարդակը/լուծել ֆինանսական խնդիրները	58	16.3
ուժեղացնել անտառների վերահսկումը	12	3.4
էժանացնել էլեկտրաէներգիան	10	2.8
տրամադրել վարկեր	5	1.4
տրամադրել ածուխ	4	1.1
ոչինչ չի օգնի, քանի որ գյուղացիները միշտ կօգտագործեն փայտը	2	0.6
ապահովել կենտրոնական ջեռուցման համակարգով	2	0.6
տրամադրել գոմաղբ	1	0.3
չգիտենմ/չեն կարող ասել	18	5.1

**Աղյուսակ 16. Որքան գումար են ծախսել անցյալ ամիս վառելափայտ գնելու համար ՀՀ դրամով**

	Քանակը		
գնել են փայտը	173	Միջինը	Մեդիանը
		8640.75	7000.00
		Նվազագույնը	Առավելագույնը
		800	30000
փայտ չեն օգտագործում	707		
անվճար են ձեռք բերել փայտը	111		
այս տարի դեռ փայտ չեն գնել	2		
չգիտեն/չեն կարող ասել	13		
<b>Ընդամենը</b>	<b>1006</b>		

**Աղյուսակ 17. Անցյալ ամսվա գազի վարձավճարը ՀՀ դրամով**

	Քանակը		
օգտագործում են գազ	621	Միջինը	Մեդիանը
		7785.68	6000.00
		Նվազագույնը	Առավելագույնը
		450	60000
չեն օգտագործում գազ	55		
<b>Ընդամենը</b>	<b>676</b>		

**Աղյուսակ 18. Անցյալ ամսվա էլեկտրաէներգիայի վարձավճարը ՀՀ դրամով**

	Միջինը	Մեդիանը
	4939.93	3800.00
	Նվազագույնը	Առավելագույնը
	400	65000



<b>Աղյուսակ 19. Հարցվածների սեռը</b>		
	<b>Քանակը</b>	<b>Տոկոսը</b>
տղամարդ	324	32.2
կին	682	67.8
<b>Ընդամենը</b>	<b>1006</b>	<b>100.0</b>

<b>Աղյուսակ 20. Հարցվածների տարիքը</b>		
	<b>Միջինը</b>	<b>Մեդիանը</b>
	44.96	45.00
	<b>Նվազագույնը</b>	<b>Առավելագույնը</b>
	18	75

Խաչաձև աղյուսակ 1ա. Հարցվածները կամ իրենց ընտանիքի անդամները գնում են անտառ Հայաստանում՝ տան համար վառելափայտ հավաքելու նպատակով՝ ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի				
		Քաղաքային	Գյուղական	Ընդամենը
այո	Քանակը	32	108	140
	տոկոսը	4.9	30.3	13.9
ոչ	Քանակը	618	248	866
	տոկոսը	95.1	69.7	86.1
<b>Ընդամենը</b>	<b>Քանակը</b>	<b>650</b>	<b>356</b>	<b>1006</b>
	<b>տոկոսը</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>

Խաչաձև աղյուսակ 1բ. Հարցվածները կամ իրենց ընտանիքի անդամները գնում են անտառ Հայաստանում՝ տան համար վառելափայտ հավաքելու նպատակով՝ ըստ Երևանի և տասը մարզերի				
		Երևան	Մարզեր	Ընդամենը
այո	Քանակը	10	130	140
	տոկոսը	2.8	19.8	13.9
ոչ	Քանակը	341	525	866
	տոկոսը	97.2	80.2	86.1
<b>Ընդամենը</b>	<b>Քանակը</b>	<b>351</b>	<b>655</b>	<b>1006</b>
	<b>տոկոսը</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>

Խաչաձև աղյուսակ 1գ. Հարցվածները կամ իրենց ընտանիքի անդամները գնում են անտառ Հայաստանում՝ տան համար վառելափայտ հավաքելու նպատակով՝ ըստ անտառների մոտ կամ անտառներից հեռու գտնվող գյուղերի				
		Անտառների մոտ գյուղեր	Անտառներից հեռու գյուղեր	Ընդամենը
այո	Քանակը	95	13	108
	տոկոսը	58.3	6.7	30.3
ոչ	Քանակը	68	180	248
	տոկոսը	41.7	93.3	69.7
<b>Ընդամենը</b>	<b>Քանակը</b>	<b>163</b>	<b>193</b>	<b>356</b>
	<b>տոկոսը</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>

<b>Խաչաձև աղյուսակ 1դ. Հարցվածները կամ իրենց ընտանիքի անդամները գնում են անտառ Չայաստանում՝ տան համար վառելափայտ հավաքելու նպատակով՝ ըստ գազ ունեցող և գազ չունեցող գյուղերի</b>				
		Գազ ունեցող գյուղեր	Գազ չունեցող գյուղեր	Ընդամենը
այո	Քանակը	67	41	108
	տոկոսը	27.3	36.9	30.3
ոչ	Քանակը	178	70	248
	տոկոսը	72.7	63.1	69.7
<b>Ընդամենը</b>	<b>Քանակը</b>	<b>245</b>	<b>111</b>	<b>356</b>
	<b>տոկոսը</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>

<b>Խաչաձև աղյուսակ 2. Հարցվածները կամ իրենց ընտանիքի անդամները գնում են անտառ Չայաստանում՝ վաճառքի համար ծառ հատելու նպատակով՝ ըստ անտառների մոտ կամ անտառներից հեռու գտնվող գյուղերի</b>				
		Անտառների մոտ գյուղեր	Անտառներից հեռու գյուղեր	Ընդամենը
այո	Քանակը	5	0	5
	տոկոսը	3.1	0.0	1.4
ոչ	Քանակը	158	193	351
	տոկոսը	96.9	100.0	98.6
<b>Ընդամենը</b>	<b>Քանակը</b>	<b>163</b>	<b>193</b>	<b>356</b>
	<b>տոկոսը</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>

<b>Խաչաձև աղյուսակ 3ա. Տանը ջեռուցման կամ սննդի պատրաստման համար վառելափայտի օգտագործումը՝ ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի</b>				
		Քաղաքային	Գյուղական	Ընդամենը
այո	Քանակը	92	207	299
	տոկոսը	14.2	58.1	29.7
ոչ	Քանակը	558	149	707
	տոկոսը	85.8	41.9	70.3
<b>Ընդամենը</b>	<b>Քանակը</b>	<b>650</b>	<b>356</b>	<b>1006</b>
	<b>տոկոսը</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>

<b>Խաչաձև աղյուսակ 3բ. Տանը ջեռուցման կամ սննդի պատրաստման համար վառելափայտի օգտագործումը՝ ըստ Երևանի և տասը մարզերի</b>				
		Երևան	Մարզեր	Ընդամենը
այո	Քանակը	20	279	299
	տոկոսը	5.7	42.6	29.7
ոչ	Քանակը	331	376	707
	տոկոսը	94.3	57.4	70.3
<b>Ընդամենը</b>	<b>Քանակը</b>	<b>351</b>	<b>655</b>	<b>1006</b>
	<b>տոկոսը</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>

<b>Խաչաձև աղյուսակ 3գ. Տանը ջեռուցման կամ սննդի պատրաստման համար վառելափայտի օգտագործումը՝ ըստ անտառներին մոտ կամ անտառներից հեռու գտնվող գյուղերի</b>				
		Անտառներին մոտ գյուղեր	Անտառներից հեռու գյուղեր	Ընդամենը
այո	Քանակը	134	73	207
	տոկոսը	82.2	37.8	58.1
ոչ	Քանակը	29	120	149
	տոկոսը	17.8	62.2	41.9
<b>Ընդամենը</b>	<b>Քանակը</b>	<b>163</b>	<b>193</b>	<b>356</b>
	<b>տոկոսը</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>

<b>Խաչաձև աղյուսակ 3դ. Տանը ջեռուցման կամ սննդի պատրաստման համար վառելափայտի օգտագործումը՝ ըստ գազ ունեցող և գազ չունեցող գյուղերի</b>				
		Գազ ունեցող գյուղեր	Գազ չունեցող գյուղեր	Ընդամենը
այո	Քանակը	117	90	207
	տոկոսը	47.8	81.1	58.1
ոչ	Քանակը	128	21	149
	տոկոսը	52.2	18.9	41.9
<b>Ընդամենը</b>	<b>Քանակը</b>	<b>245</b>	<b>111</b>	<b>356</b>
	<b>տոկոսը</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>

<b>Խաչածև աղյուսակ 3ե. Տանը ջեռուցման կամ սննդի պատրաստման համար վառելափայտի օգտագործումը՝ ըստ մարզերի</b> <i>(դասակարգված նվազման կարգով)</i>				
		Այո	Ոչ	Ընդամենը
Տավուշ	Քանակը	39	3	42
	տոկոսը	92.9	7.1	100.0
Սյունիք	Քանակը	36	11	47
	տոկոսը	76.6	23.4	100.0
Լոռի	Քանակը	45	44	89
	տոկոսը	50.6	49.4	100.0
Գեղարքունիք	Քանակը	33	40	73
	տոկոսը	45.2	54.8	100.0
Վայոց Ձոր	Քանակը	7	10	17
	տոկոսը	41.2	58.8	100.0
Կոտայք	Քանակը	34	51	85
	տոկոսը	40.0	60.0	100.0
Արմավիր	Քանակը	30	56	86
	տոկոսը	34.9	65.1	100.0
Արարատ	Քանակը	24	61	85
	տոկոսը	28.2	71.8	100.0
Շիրակ	Քանակը	24	64	88
	տոկոսը	27.3	72.7	100.0
Արագածոտն	Քանակը	7	36	43
	տոկոսը	16.3	83.7	100.0
Երևան	Քանակը	20	331	351
	տոկոսը	5.7	94.3	100.0
<b>Ընդամենը</b>	<b>Քանակը</b>	<b>299</b>	<b>707</b>	<b>1006</b>
	<b>տոկոսը</b>	<b>29.7</b>	<b>70.3</b>	<b>100.0</b>

<b>Խաչաձև աղյուսակ 4ա. Ինչ պետք է անել, որպեսզի գյուղական բնակիչները դադարեն վառելափայտ օգտագործելուց՝ ըստ գազ ունեցող և գազ չունեցող գյուղերի</b> <i>(բաց հարց է, թույլատրելի են մեկից ավելի պատասխաններ)</i>				
		Գազ ունեցող գյուղեր	Գազ չունեցող գյուղեր	Ընդամենը
գազով ապահովել	Քանակը	128	106	234
	<i>տոկոսը</i>	<i>52.2</i>	<i>95.5</i>	<i>65.7</i>
էժանացնել գազը	Քանակը	85	4	89
	<i>տոկոսը</i>	<i>34.7</i>	<i>3.6</i>	<i>25.0</i>
բարելավել կենսամակարդակը/ լուծել ֆինանսական խնդիրները	Քանակը	52	6	58
	<i>տոկոսը</i>	<i>21.2</i>	<i>5.4</i>	<i>16.3</i>
ուժեղացնել անտառների վերահսկումը	Քանակը	12	0	12
	<i>տոկոսը</i>	<i>4.9</i>	<i>0.0</i>	<i>3.4</i>
էժանացնել էլեկտրաէներգիան	Քանակը	7	3	10
	<i>տոկոսը</i>	<i>2.9</i>	<i>2.7</i>	<i>2.8</i>
տրամադրել վարկեր	Քանակը	5	0	5
	<i>տոկոսը</i>	<i>2.0</i>	<i>0.0</i>	<i>1.4</i>
տրամադրել ածուխ	Քանակը	1	3	4
	<i>տոկոսը</i>	<i>0.4</i>	<i>2.7</i>	<i>1.1</i>
ոչինչ չի օգնի, քանի որ գյուղացիները միշտ կօգտագործեն փայտը	Քանակը	2	0	2
	<i>տոկոսը</i>	<i>0.8</i>	<i>0.0</i>	<i>0.6</i>
ապահովել կենտրոնական ջեռուցման համակարգով	Քանակը	0	2	2
	<i>տոկոսը</i>	<i>0.0</i>	<i>1.8</i>	<i>0.6</i>
տրամադրել գոմաղբ	Քանակը	1	0	1
	<i>տոկոսը</i>	<i>0.4</i>	<i>0.0</i>	<i>0.3</i>
չգիտեմ/չեմ կարող ասել	Քանակը	17	1	18
	<i>տոկոսը</i>	<i>6.9</i>	<i>0.9</i>	<i>5.1</i>

<b>Խաչածև աղյուսակ 4բ. Ինչ պետք է անել, որպեսզի գյուղական բնակիչները դադարեն վառելափայտ օգտագործելուց՝ ըստ անտառներին մոտ կամ անտառներից հեռու գտնվող գյուղերի</b>				
<i>(բաց հարց է, թույլատրելի են մեկից ավելի պատասխաններ)</i>				
		Անտառներին մոտ գյուղեր	Անտառներից հեռու գյուղեր	Ընդամենը
գազով ապահովել	Քանակը	114	120	234
	տոկոսը	69.9	62.2	65.7
էժանացնել գազը	Քանակը	50	39	89
	տոկոսը	30.7	20.2	25.0
բարելավել կենսամակարդակը/լուծել ֆինանսական խնդիրները	Քանակը	14	44	58
	տոկոսը	8.6	22.8	16.3
ուժեղացնել անտառների վերահսկումը	Քանակը	3	9	12
	տոկոսը	1.8	4.7	3.4
էժանացնել էլեկտրաէներգիան	Քանակը	3	7	10
	տոկոսը	1.8	3.6	2.8
տրամադրել վարկեր	Քանակը	0	5	5
	տոկոսը	0.0	2.6	1.4
տրամադրել ածուխ	Քանակը	2	2	4
	տոկոսը	1.2	1.0	1.1
ոչինչ չի օգնի, քանի որ գյուղացիները միշտ կօգտագործեն փայտը	Քանակը	0	2	2
	տոկոսը	0.0	1.0	0.6
ապահովել կենտրոնական ջեռուցման համակարգով	Քանակը	2	0	2
	տոկոսը	1.2	0.0	0.6
տրամադրել գոմաղբ	Քանակը	0	1	1
	տոկոսը	0.0	0.5	0.3
չգիտեմ/չեմ կարող ասել	Քանակը	11	7	18
	տոկոսը	6.7	3.6	5.1